

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1. ՀՀ Կոտայքի մարզի Առինջի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1):

ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին, պատշաճ և որակով

բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ/հետևում է քարտուղարի հանձնարարականներին, համապատասխան ժամկետներում, կատարման

ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին

դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին

ներկայացնում է աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ,

տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե/իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ ընդունելության համար.

զ/քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

է/քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում

նախապատրաստում պատասխան

### **Կատարում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ**

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի :

բ) ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքների,

աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի

անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու

ունակություն.

գ/տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն Մրցույթը

կկայանա 31 հուլիսի 2019թ. ժամը 11<sup>00</sup> Առինջի համայնքապետարանի շենքում (գ.Առինջ Մաշտոցի փողոց 51):

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 15.07.2019թ:

Դիմել՝ ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

- տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:
- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունվում են Առինջի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ՝ 010-61-45-01 կամ ք.

Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության

ՏԻ և ՀԾՀ բաժնում, հեռ. 0223 23413, ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 17<sup>00</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: